Արձանագրություն N 2

«ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտաս 49/4 **«31» «05» 2023 թ**
ժ.16:00

Նիստին ներկա էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Անատոլի Տոկարև (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Արսեն Ենգիբարյան (ԳՊ/ԳԱ),
Սարգիս Ալոյան (ԳՊ/ԲԱ), Անահիտ Ավետիսյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Ներսիսյան

1. Տեղեկություններ «ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին

(Ա.Տոկարև)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 16:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: 2023թ-ի Մայիսի 31-ից մինչև Հունիսի 05-ը , «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ -ում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում, տեղի ունեցավ « **ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-23/5**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար « **ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-23/5**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

1	«ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ	ՀՎՀՀ 01019178 էլ. Փոստ gev.martirosyan87@gmail.com

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա.Տոկարև)

2.1 Հրավերով սահմանված՝ Հավելված 1-ը, Հավելված 1.3-ը և Հավելված 2-ը ՝ «ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված է հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես Կազմակերպության կողմից ներկայացված հայտի դիմում-հայտարարությունում (Հավելված 1) սխալ է լրացված ՀՎՎՎ-ն ՝ մեկ նիշ պակասում է:

2.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 17.03.2022թ. հանձնարարել ընթացակարգի քարտուղարին անհամապատասխանությունների շտկման ծանուցում ուղարկել «Գեո Լոջիք» ՍՊԸ-ին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

2.3 «ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ –ի սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակից կազմակերպության հայտը գնահատվել է բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա.Տոկարև)

Չափաբաժին	Անվանումը	Ֆինանսական միջոցներով նախատեսվող գնման հայտի գին	«ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ		
			Ինքնարժեք	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	Այլումինե կոնստրուկցիաների պատրաստման և տեղադրման աշխատանքներ	**790000**	650000	130000	780000
2	Այլումինե կոնստրուկցիաների	**2100000**	1700000	340000	2040000

	պատրաստման և տեղադրման աշխատանքներ				

3.1 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3.2 Հանձնաժողովը որոշեց «ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3.3 Հանձնաժողովը որոշեց «ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ –ին:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա.Տոկարև)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.3-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը «ՍՉԱՄ-ԳՀԱՇՁԲ-23/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«ԱՔՍԻՈՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ –ին:**

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

Ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

Հանձնաժողովի		
Անդամներ՝		Ա.Տոկարև
		Ա.Ենգիբարյան
		Ս.Ալոյան
		Ա.Ավետիսյան
Քարտուղար՝		Ա.Ներսիսյան